ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

# ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

## «ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի ԹԻՎ 597-Ն ՈՐՈՇՄԱՆ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով հարցի համակողմանի քննարկման արդյունքում որոշում կայացնելու անհրաժեշտությունը եւ հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության՝ վեճի առարկա որոշումից զատ համադրված վերլուծության առարկա պետք է դառնան նաեւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» եւ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքների համապատասխան դրույթները, ինչպես նաեւ այս ոլորտում ՀՀ միջազգային պարտավորությունների պատշաճ կատարման հիմնահարցերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Հետաձգել գործի դատաքննությունը եւ այն վերսկսել 2013 թվականի նոյեմբերի 12-ին, ժամը 10.00-ին:
2. Վերանայել ՀՀ սահմանադրական դատարանի 11.06.2013թ. ՍԴԱՈ-57 աշխատակարգային որոշման 4-րդ կետը եւ գործի դատաքննությունն անցկացնել բանավոր ընթացակարգով:
3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգով սույն գործի դատաքննությանը հրավիրել նաեւ ՀՀ Ազգային ժողովի ներկայացուցչին՝ գործով պարզաբանումներ ստանալու համար:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**
**ՆԱԽԱԳԱՀ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

22 հոկտեմբերի 2013 թվականի
ՍԴԱՈ -85